Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

https://orcid.org/0000-0003-2226-6435

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-46

Հիմնաբառեր. *արտահանում, վերաարտահանում, ներմուծում, աճ, կառուցվածք*

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ վերջին տարիների արտահանման շարժընթացը, կառուցվածքը, վերջինիս փոփոխությունը, ըստ երկրների բաշխվածությունը, ինչպես նաև արտահանման աճի հիմքում ընկած գործոնները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ արտահանման մի զգալի մասը պատկանում է վերաարտահանմանը, որը չի բացառվում՝ կարող է կրճատվել աշխարհաքաղաքական հնարավոր փոփոխությունների հետևանքով: Որոշակիորեն ձևափոխվել է ՀՀ արտահանման կառուցվածքը: Թեև նախորդ 2 տարիներին արտահանումն աճել է և այժմ էլ շարունակում է աճել աննախադեպ տեմպերով, սակայն ավանդական արտահանման ապրանքախմբերի զգալի մասում անկում է գրանցվում, միաժամանակ, իջնում է նաև ըստ երկրների դիվերսիֆիկացման՝ առանց այն էլ ցածր մակարդակը:

Հայաստանից արտահանումը հատկապես վերջին տարիներին աճում է արագ տեմպերով: Այսպես՝ եթե մինչև 2021 թ.-ը այդ ցուցանիշը չէր հատում 3 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը, ապա 2022 թ.-ին նախ գերազանցեց 5 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ արդեն 2023 թ.-ին՝ 8 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը: Ընդամենը 2 տարում Հայաստանից արտահանումն աճել է շուրջ 3 անգամ: Ակնհայտ է, որ այդ կարճ ժամանակահատվածում մեր արտադրական հզորություններն ու արտահանման ներուժը չէին կարող նման տեմպով աճել, առավել ևս, երբ այդ ընթացքում արտահանման առաջմղման որևէ նոր, հատուկ գործիքակազմ կամ միջոցառում չի կիրառվել: Այս տեսանկյունից, անհրաժեշտ է վերլուծել և պարզել,

թե ինչ գործոններ են ընկած վերջին շրջանում ՀՀ արտահանման աճի հիմքում:

Ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ Հայաստանի արտահանման ցուցանիշը 2023 թ.-ին կազմել է 8.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 55%-ով: Սակայն, գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ այդ աճը տեղի է ունեցել առավելապես «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման աննախադեպ (3.2 անգամ) և «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ» ապրանքախմբի զգալի (80%) աճի հաշվին: Էապես նպաստել է նաև «Վերգետնյա, օդային, ջրային տրանսպորտային միջոցներ» (65%) և «Մանածագործական իրեր» (59%) ապրանքախմբերի արտահանման աճը: Մինչդեռ ՀՀ արտահանման մյուս ավանդական ապրանքախմբերը կամ աննշան են աճել, կամ նույնիսկ կրճատվել են: Այսպես՝ «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբն աճել է ընդամենը 0.3%-ով, իսկ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանումը նախորդ տարվա համեմատ կրճատվել է շուրջ 14%-ով, «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախումբը՝ շուրջ 20%-ով, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը՝ շուրջ 2%-ով, «Կենդանի կենդանիներ» ապրանքախումբը՝ ավելի քան 42%-ով:

ՀՀ արտահանման կառուցվածքի առավել մանրամասն ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ, որոշակի ապրանքների առումով, թե՛ ֆիզիկական ծավալի, թե՛ արժեքային անկմամբ պայմանավորված, կրճատվել է պղնձի հանքաքարի և խտանյութի, կոնյակի, ալյումինե փայլաթիթեղի, ծիրանի, թարմ ձկան, ցինկի հանքաքարի և խտանյութի, թանկարժեք մետաղի հանքաքարի և խտանյութի, ժամացույցի թափքի և դրա մասերի, այլ կերպ պահածոյացված պտուղների և բանջարեղենի արտահանումը: Միաժամանակ, բացառապես քանակի կրճատմամբ պայմանավորված, նվազել է լոլիկի, խաղողի գինու, շոկոլադի, պանրի և կաթնաշոռի արտահանումը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ-ից արտահանվող հիմնական ապրանքախմբերի շարժընթացը, 2019-2023 թթ., մլն ԱՄՆ դոլար[1]

[1] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf

Ուշագրավ է դիտարկել որոշ ապրանքների արտահանման քանակական աճը. օրինակ՝ 2023 թ.-ին Հայաստանից արտահանվել է 29 տոննա անմշակ ոսկի, այն դեպքում, երբ նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 9 տոննա: Ոսկերչական իրերի արտահանումը ևս աննախադեպ աճել է՝ քանակով 6.7 անգամ, արժեքով՝ 4.5 անգամ: Ավելի քան 4 անգամ աճել է սպիրտային թրմօղու, ավելի քան կրկնակի՝ սմարթֆոնների և 1.7 անգամ՝ մարդատար ավտոմեքենաների արտահանումը, թեև վերջինս բացառապես գնային գործոնով պայմանավորված աճի հաշվին է: Ի տարբերություն նախորդ տարվա, աճել է նաև սիգարետի և սիգարների արտահանումը: Հաշվի առնելով, որ վերոնշյալ ապրանքների արտահանումն աճել է աննախադեպ տեմպով, որին երկրում առկա արտադրական կարողությունները դժվար թե կարողանային արձագանքել, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշյալ ապրանքների մի մասի արտադրությունը Հայաստանում ընդհանրապես չի կազմակերպվում, ուստի ամենահավանական տարբերակը մնում է վերաարտահանումը: Քանի որ արտահանման դեպքում ծագման երկրի վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն հրապարակվում, որպեսզի հնարավոր լիներ հստակ կերպով տարանջատել, թե արտահանման որ մասն է ՀՀ արտադրության արդյունք, իսկ պաշտոնական վերաարտահանման տվյալներն էլ շատ աղքատիկ են և չեն արտացոլում իրական պատկերը, ուստի նպատակահարմար ենք համարում նշյալ ապրանքների արտահանման աճը համեմատել ներմուծման աճի հետ և ներմուծում-արտահանում սխեմայով մոտավոր պատկերացում կազմել վերաարտահանման և արտահանման իրական ծավալների մասին:

Այսպես՝ 2023 թ.-ին Հայաստանի արտահանման ծավալի ավելի քան 1/5-ը կազմում էր անմշակ ոսկու արտահանումը, որը նախորդ տարվա համեմատ աճել էր 4.4 անգամ: Հատկանշական է, որ 5.9 անգամ էլ աճել էր ներմուծումը: Գծապատկեր 2-ից կարելի է պարզել, որ ռուս-ուկրաինական հակամարտությունից ի վեր՝ 2022-2023 թթ.-ին, որոշակի կոռելյացիա է նկատվում անմշակ ոսկու արտահանման և ներմուծման միջև: Ընդ որում, 2023 թ.-ի տվյալներն ամսական կտրվածքով դիտարկելիս կապն ավելի ակնհայտ է դառնում: Հատկանշական է, որ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման դեպքում մեծածավալ աճ տեղի է ունեցել հոկտեմբեր-դեկտեմբերին: Արդյունքում 2023 թ.-ին Հայաստան ներմուծվել է 1,4 մլրդ ԱՄՆ դոլարի, արտահանվել՝ 1.8 մլրդ ԱՄՆ դոլարի անմշակ ոսկի: Մոտավոր գնահատականով այդ





ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Անմշակ ոսկու և ոսկերչական իրերի արտահանման և ներմուծման աճը՝ անգամներով[2]

[2] Հաշվարկները կատարվել է ՄԱԿ-ի առևտրի վիճակագրության տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/





ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ արտահանման կառուցվածքը, 2021 թ. և 2023 թ.

1,4 մլրդ ԱՄՆ դոլարը կարելի է համարել վերաարտահանում: Անմշակ ոսկին ներմուծվել է Ռուսաստանից, արտահանվել առավելապես ԱՄԷ և Հոնկոնգ: Գրեթե նույն պատկերն է նաև ոսկերչական իրերի դեպքում, որոնց արտահանումը ևս նախորդ տարվա համեմատ շեշտակի (4,5 անգամ) աճել է:

2023 թ.-ին վերաբերող մեկ այլ «բացահայտում» է ավելի քան կես մլրդ ԱՄՆ դոլարի սմարթֆոնների արտահանումը: Կարևոր է ընդգծել, որ այդ նույն տարում ներմուծվել է ավելի քան 600 մլն ԱՄՆ դոլարի սմարթֆոն[3]: Ընդ որում, մինչև 2022 թ.-ը Հայաստանից սմարթֆոններ գրեթե չեն արտահանվել: Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ գերակշիռ մասն արտահանվել է դեպի Ռուսաստան, անհամեմատ փոքր արժեքով՝ դեպի Բելառուս և այլ երկրներ: 2022 թ.-ին ավելի քան 4,5 անգամ, իսկ 2023 թ.-ին՝ արդեն բարձր հիմքի վրա սմարթֆոնների ներմուծումն աճել է 2,5 անգամ: Ակնհայտ է, որ սմարթֆոնների արտահանումը Հայաստանից, տնտեսագիտական իմաստով, ամբողջովին վերաարտահանում է, թեև, ըստ ՄԱԿ-ի առևտրի վիճակագրության, սմարթֆոնների վերաարտահանումն ընդամենը կես մլն ԱՄՆ դոլար է: Նույն տրամաբանությամբ, 450 մլն ԱՄՆ դոլարի մարդատար ավտոմեքենաների արտահանման զգալի մասը ևս վերաարտահանում է:

2023 թ.-ին Հայաստանի արտահանման տասնյակը եզրափակում են հեռուստացույցները և մոնիտորները, որոնք ևս վերաարտահանման շարքից են, քանի դրանց արտահանումն իրականացվում է նույն՝ ներմուծում-արտահանում սխեմայով:

Համեմատելով 2021 թ.-ի և 2023 թ.-ի արտահանման կառուցվածքները (գծապատկեր 3)՝ նկատելի է, որ տեղի է ունեցել էական փոփոխություն. 2023 թ.-ին տասնյակում են հայտնվել սմարթֆոնները, մարդատար ավտոմեքենաները, հեռուստացույցները և մոնիտորները, բացի այդ, անմշակ ոսկու մասնաբաժինը 4,5%-ից հասել է 21,65%-ի: Միաժամանակ, տասնյակից դուրս են մնացել ավանդական արտահանվող ապրանքներից մոլիբդենի հանքաքարն ու խտանյութը, ալյումինի փայլա-

[7] ՀՀ վճարային հաշվեկշիռը, 2023 թ., https://www.cba.am/stat/stat_data_arm/PRESS%20RELEASE-2023-Q4.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Հայաստանի արտահանման ուղղությունները, 2021 թ. և 2023 թ.[4]

թիթեղը և վերջին տարիներին արտահանման մեջ աճ ապահովող թարմ ձուկը: Կարևոր է ընդգծել, որ այս կառուցվածքային փոփոխությունը բացառապես պայմանավորված է աշխարհաքաղաքական իրողություններով, այլ ոչ թե ՀՀ արտահանման քաղաքականության փոփոխությամբ, ինչը նշանակում է, որ եթե իրավիճակը փոխվի, ՀՀ արտահանման կառուցվածքը նորից նախկին տեսքը կունենա:

Բացի արտահանվող ապրանքների կառուցվածքից, որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել նաև արտահանման ուղղություններում: Մասնավորապես՝ զգալիորեն մեծացել է ԱՄԷ-ի մասնաբաժինը՝ ի հաշիվ ոսկու արտահանման, տասնյակում ընդգրկվել են Հոնկոնգը և Իրանը: Բացի այդ, զգալիորեն բարձրացել է կենտրոնացվածության աստիճանը, այսպես եթե 2021 թ.-ին 10 երկրի բաժին էր ընկնում արտահանման 83%-ը, ապա 2023 թ.-ին՝ 90%-ը: Իսկ ընդամենը 2 երկրի բաժին է ընկել ողջ արտահանման 67%-ը:

Հատկանշական է, որ 2023 թ. միտումը շարունակվել է նաև 2024 թ.-ի հունվար-փետրվարին: Թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի արտահանումն աճել է 8,9 անգամ[5], ապահովելով արտահանման հիմնական աճը, վերջինիս նպաստել է նաև մանածագործական իրերի և հանքահումքային ապրանքների արտահանումը: Մինչդեռ արտահանման ապրանքախմբերի զգալի մասում՝ ԵԱՏՄ ԱՏԳԱԱ 20 բաժնից 11-ում, այդ թվում՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ապրանքախմբում անկում է գրանցվել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Նույն միտումը շարունակվել է նաև ըստ արտահանման ուղղությունների երկրների կենտրոնացվածության առումով, մասնավորապես՝ 10 երկրի մասնաբաժինը հասել է 95%-ի, իսկ արտահանման աճի առումով առաջատարը դարձել է ԱՄԷ-ն՝ գերազանցելով նույնիսկ դեպի ՌԴ արտահանման աճին, սակայն, ի տարբերություն ՌԴ-ի, դեպի ԱՄԷ արտահանվում է ընդամենը մի քանի ապրանքախումբ՝ անմշակ ոսկի, ոսկյա իրեր, ադամանդ, անհամեմատ փոքր արժեքով՝ սիգարետ և այլ ապրանքներ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ թեև վերջին ժամանակներում ՀՀ-ից արտահանումն աճում է աննախադեպ տեմպերով, սակայն այդ աճը պայմանավորված է ոչ այնքան ՀՀ արտադրական կարողությունների ընդլայնմամբ և միջազգային մրցունակության բարձրացմամբ, այլ առավելապես աշխարհաքաղաքական գործոններով: Արտահանման մեջ զգալի մասը վերաարտահանումն է, և, պայմանավորված արտաքին միջավայրի փոփոխու-

[4] Հաշվարկները կատարվել է ՄԱԿ-ի առևտրի վիճակագրության տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/
[5] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-փետրվարին, https://www.armstat.am/file/article/sv_02_24a_411.pdf

թյամբ, հնարավոր է գրանցվի արտահանման կրճատում: Արդյունքում փոխվել է արտահանման կառուցվածքը, իջել դիվերսիֆիկացման մակարդակն ըստ երկրների, և այդ միտումը շարունակվել և առավել սրվել է 2024 թ.-ի հունվար-փետրվարին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf
2. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-փետրվարին, https://www.armstat.am/file/article/sv_02_24a_411.pdf
3. ՀՀ վճարային հաշվեկշիռը, 2023 թ., https://www.cba.am/stat/stat_data_arm/PRESS%20RELEASE-2023-Q4.pdf
4. UNComTrade, https://comtradeplus.un.org/

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ОДИССЕЯ РОСТА ЭКСПОРТА АРМЕНИИ

В статье рассматриваются динамика, структура, изменение экспорта РА за последние годы, распределение по странам и факторы, лежащие в основе роста экспорта. В результате исследования мы выяснили, что значительная часть экспорта – это реэкспорт, который хотя бы в этой части может сократиться в результате возможных геополитических изменений. Структура экспорта РА в определенной степени изменилась. Хотя экспорт Армении увеличился за последние два года и продолжает расти беспрецедентными темпами, в некоторых традиционных группах экспортных товаров наблюдается спад. Кроме того, диверсификация направлений экспорта снижается, что усугубляет и без того низкий уровень.

Ключевые слова: *экспорт, реэкспорт, импорт, рост, структура*

Ruzanna TADEVOSYAN
Junior Researcher at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

ODYSSEY OF ARMENIA'S EXPORT GROWTH

The paper examines the dynamics, structure, and change of the RA export in recent years, as well as the distribution by countries and the factors underlying the growth of exports. As a result of the study, we found out that a significant portion of the export is re-export, which could be reduced as a result of possible geopolitical changes. The structure of RA exports has changed to a certain extent. While Armenia's exports have increased over the past two years and continue to grow at an unprecedented rate, there has been a decline in several traditional export product groups. Additionally, the diversification of export destinations is decreasing, further compounding an already low level.

Keywords: *export, re-export, import, growth, structure*